ՆՈՐ-ԴԱՐ

№ 29 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 26 փետրվարի 1885 Երեքշաբթի 26 փետրվարի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 29

Տարեկան 10 րուբլ. վեց ամիսը 6 րուբլ. երեք ամիսը 3 ր. 50 կ.
Համար 5 կոպէկ:
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»:

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) առաւօտեան 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով:
Յայտարարութեան տողը 2 կ., [illegible]

„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի

Ներկայ 1885-ի համար բաժանորդագրութիւնը շարունակվում է: Բաժանորդ են գրվում միմիայն խմբագրատանը, Պօստատան ետև Սամերա վրաց եկեղեցուն հանդէպ: Օտարաքաղաքացիները դիմում են խմբագրութեան հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ»:

Բաժանորդագինն է. տարէնը՝ 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.:

Եւրոպայում և Թիւրքիայում տարեկան բաժանորդագինը՝ 30 ֆրանկ:

Բաժանորդագրութիւնը ընդունվում է միշտ ամսի 1-ից հաշուած:

Редакція и контора газ. «Норъ-Даръ» помѣщаются въ центрѣ города, за Почтой, на Троицкомъ переулкѣ, въ домѣ № 9.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
Առաջնորդող.—Առաջնորդողի փոխարէն:
Քրոնիկոն.—Լուրեր: Արդախու գաւառի տնտեսական և վիճակագրական նկարագրութիւնը:
Թղթակցութիւններ.—Մոսկ. Պետերբուրգ:
Քաղաքական.—Միացեալ Նահանգները: Միջին-Ասիայի հարցը: Անգլիա: Սուդան:
Խառն լուրեր:
Հեռագիրներ:
[illegible]
Յայտարարութիւններ:
Բանասիրական.—(Կանանց բարոյական վիճակը. Էրնեստ Լեգուվէ) Սիրուհի:

Թիֆլիս, 25 փետրվարի 1885:

ԱՌԱՋՆՈՐԴՈՂԻ ՓՈԽԱՐԷՆ

Մարդուս կեանքի մէջ կան րոպէներ, քաղցր, դառն, տխուր, ծանր րոպէներ, որոնց արած տպաւորութիւններն մնում են յաւիտեան:

Որքան բան ունէին ասելու միմեանցից բաժանուած սիրող սրտերը... Հանդիպելով դրանք միմեանց մնում են լուռ. մի հայեացք, մի կաթիլ արտասուք, մի համբոյր յայտնում է ամեն բան: Ռոմանտիկ արած հայրենիքի քաջ զինուորը, աչքերը հառած թշնամու յաղթութիւնը տեսնելով ժըպտում է, նրա լեզուն մունջ է մընում: Մայրը իւր կորած զաւակը գտնելով՝ լալիս է միայն...

Ով չէ հանդիպում իւր կեանքում բուռն զգացումներով լեցուն րոպէների, ուր լեզուն դադարում է գործելուց, մարդ անխօս մի ամբողջ կեանք ապրում վերջացնում է:

Պուբլիցիստիկ զէնքը—գրիչն է և նրա գործունէութեան ասպարէզը—խօսքի աշխարհը: Բայց շատ անգամ պատահում է, որ նա գըրիչը ձեռք առնել չէ կարողանում, գրելը մոռանում է: Եւ այդ նրա համար չէ, որ բան չը կայ գրելու, այլ նրա համար, որ միանգամից, խորհրդածութեան համար այնքան նշանաւոր դէպքեր, երևոյթներ են կուտակվում, որոնց տակ սա ճնշուած անկարող է լինում գործելու, անզօր գրիչը վերցնելու: Պուբլիցիստը գրիչը թողած ծիծաղում է, որովհետև տեսածը տխուր բաներ են, լալիս է անյոյս և ուրախալի երևոյթների հանդիպելով:

Ահա այսպիսի րոպէներին չենք կարող խօսել այն ահագին յուզմունքի մասին, որը յարուցել է Նոր-Նախիջևանում «Նոր-Դար»-ի № 17-ի այն առաջնորդողը, որը վերաբերում է այնտեղի հոգևոր դպրանոցին: Եթէ կարողանայինք այս անգամ խօսելու, այն ժամանակ կը տեսնէին թէ ինչպէս մարդիկ ամենահասարակ ճշմարտութիւնը, պարզ իրողութիւնը լսելուց վրդովվում են, իսկ օրէնքի և խղճի դէմ գործելուց չեն քաշվում: Եթէ կարողանայինք գրել, կը ցոյց տայինք թէ ինչպէս մի քաղաքագլուխ մեր ամբողջ հոգևորականութեան դէմ յարձակուելով եկեղեցւոյ պաշտպան է հանդիսանում, իսկ իւր դատապարտելի անտարբերութեամբ նոյն եկեղեցւոյ օգտին կտակած մեծ գումարը ուրիշ նպատակների ծառայելով եկեղեցին զուրկ է մնում նրանից:

Եթէ կարողանայինք գրել, գուցէ ցոյց տայինք, որ որքան էլ հոգևորականների դէմ գանգատներ են գրվում, որքան էլ որ կատարուած զեղծումների մասին բողոքներ են լինում, որքան էլ որ աշխատում են մեր հոգևորական դասի կացութիւնը նրան աննպաստ գոյներով նկարագրելու, այնուամենայնիւ այսօր մենք պատրաստուած ենք հաւատալու, որ հոգևորականները աշխարհականներից բարձր են: Զարմանալի չէ այս, որ մենք այժմս այդպէս ենք տրամադրուած:

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

ՍՂՆԱԽԻՑ.—Այս օրերս Ներքին-Մաչխան գիւղում վրացի նոր ամուսնացած մի կինը դաշոյնով սպանում է իւր ամուսնուն. պատճառը պատմում են, որ այդ կինը աղջիկ ժամանակից ուրիշի հետ է եղել սիրահարուած:

—ԲԱԹՈՒՄԻՑ.—Ամսոյս 19-ին, դարձեալ մի պարսիկ, մի այլ պարսիկի մի քանի դաշոյնի հարուած տալով „կոմանդանտի“ մօտ, ուզեցել է սպանել, բայց [illegible] ժողովուրդը հասնելով ազատում է վիրաւորուածին մահից. իսկ չարագործի ձեռքից խլելով դաշոյնը, այնքան ծեծում է նրան, որ բոլորովին կիսամեռ է լինում նա, և առողջանալու յոյս չկայ:

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ.—Ամսոյս 20-ին գիշերը, աւազակները մուտք գործելով մի մանրավաճառ Բագուի պարսիկի խանութը, կոտրելով խանութպանի գըլուխը, ինչպէս ասում են, տանում են իրենց հետ 350 րուբլի առձեռն փող: Աւազակները դեռ գտնուած չեն. կասկածաւորներ կան, որ ասում են թէ պահապանը պէտք է լինի, բայց դեռ ստոյգը յայտնի չէ:

Մեզ մօտ աւազակութիւնը և մարդասպանութիւնը առօրեայ սովորական երևոյթ է դառել: Տրանզիտի փակումը շատ վնաս պատճառեց տեղային վաճառականութեան. այժմ այստեղ առևտուրը աննախընթաց դրութեան մէջ է, չնայելով այդքան „ազատութեան“ [illegible] են մնում:

Ա. Կ. Ք.

ՄՈԶԴՈԿԻՑ պ. Մ. հեռագրում է մեզ. Հաստատ աղբիւրներից յայտնի է, որ Աստրախանի թեմը ցանկանում է ընտրել Կաթողիկոսի ընտրութեանը մասնակցելու համար թեմական պատգամաւոր Աստուածատուր Կաչկաչեանին:

Իմանում ենք, որ Աստրախանի թեմի կառավարիչ Ս. Սուքիաս Պարզեանը Պետերբուրգից ս. Էջմիածին անցնելիս, օրերումս կը հասնէ Թիֆլիս: Ս. Սրբազանը հրաւիրել է նրան իւրն [illegible] համար:

Նոյնպէս լուր հաղորդում ենք, որ օրերումս հանգուցեալ Գրիգոր [illegible] կտակով յատկացրել է 5000 ր. Ներսիսեան դպրանոցին, 1000 ր. Հայոց Բարեգործ. Ընկերութեան, նոյնպէս և աւելի փոքրիկ գումարներ զանազան բարենպատակ գործերին:

Շնորհակալութեամբ ստացանք [illegible] Գիւտ քահ. Աղանեանցից իւր թարգմանած գրքոյկը [illegible], [illegible] մէջ հին Յունաց և Հռովմայեցւոց կեանքից: Տպուած է Յ. Մարտիրոսեանի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

(ԿԱՆԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.—
ԷՐՆԵՍՏ ԼԵԳՈՒՎԷ.)

Սիրուհի.

Բարձրանալով, ճախրելով դէպի երկինքի անսահմանութիւնը՝ Բէատրիչէն կարդում է իւր սիրածի պատկերի վերայ հարցեր և պատասխանում է առաջ քան նա կը խօսէր: Նա իւր աչքերի մէջ արտափայլեցնում է երկինքը և նրա աչքերի մէջ Ալիգիերին գըտնում է նրան: „Ella guardava suso, ed io in lei“. (Նա նայում էր երկինքի վերայ, ես նայում էի նրա վերայ): Սակայն որքան աւելի բարձրանում էր, այնքան աւելի փայլում է Բէատրիչէի գեղեցկութիւնը և վերջապէս հասնում են Քրիստոսի յաղթութեան անդրանիկ հրեշտակների մօտ—Փրկչի մօտ: „Ա՜խ, բացականչում է բանաստեղծը, Պօլիմնիայի և նրա քոյրերի ամենաքաղցր կաթով սնուցած լեզուները չեն կարող պատմել Բէատրիչէի ժըպտի և գեղեցկութեան հազարերորդական մասը, երբ նա ինձ ներկայացրեց երկնաւոր գնդերին և ասաց. «Այժմ դու փրկուած ես“. Եւ յիրաւի նա փրկուած էր: Այժմ նա ճաշակելով և վայելելով երկնային գեղեցկութիւնը՝ աներկիւղ կարող է վերադառնալ աշխարհ և այնտեղ իւր կեանքը վերջացնել: Բէատրիչէն նստում է երրորդ շրջանի մէջ, այն գահի վերայ, ուր Ռաքելինութիւնները բարձրացրին իրեն, իսկ փրկուած Դանտէն դիմում է նրան հետևեալ բարձրիմաստ խօսքերով. „Ո՜վ կին, որի մէջ ծաղկեց իմ յոյսը, դու, որ արժանի համարեցիր փրկութեան համար քայլերդ հետքերը դժոխքի շէմքումը թողնել, դու ինձ ստրկութիւնից հանեցիր և պարգևեցիր դէպի ազատութիւն: Աշխարհը էլ ինձ համար վտանգաւոր չէ. կրծքիս մէջ ես կը պահեմ անարատութեանդ կենդանի պատկերը, որպէս զի կեանքիս վերջին օրը հոգիս անջատուելով մարմնիցս՝ հաճելի հանդիսանայ հայեացքներիդ“:

Այսպէս է հանդիսանում կնոջ անյայտ օրինակը, որ Դանտէի հանճարը դնում է նորագոյն պօէզիայի և քաղաքակրթութեան սեմքում: Այս արարածը, որ աւելի ես գեղեցկանում է՝ որքան աւելի սիրվում է, դառնում է աւելի և աւելի անարատ... այս երկու սրտերը, որոնք իրար տանում են դէպի բարւոյ անսահմանութիւնը՝ մեզ մի այնպիսի իրական և միևնոյն ժամանակը իդէալական տեսարան էր ներկայացնում, որ այստեղ ընդունում ես և այն սիրուհուն, որպիսին տալիս է երկիրը, և այն սիրուհուն, որպիսին խոստանում է երկինքը և այն, որ երկնային ճանապարհորդները տանում են իրենց եաևից ոգիներ, որոնք նրանց գիւթում են մինչև երկնային աշխարհները:

Պրօվանսալեան բանաստեղծութիւնը *) և ասպետականութիւնը մի առանձնայատկութիւն ես աւելացրին սիրած կնոջ այդ ազդեցութեանը:

Դանտէի մայր սիրուհին երկինք է տանում, դէպի բանաստեղծի փառքը, դէպի զօրականի փառքը և դէպի հայրենեաց պաշտպանի փառքը:

Սէրը տաղանդ էր:

«Կան մարդիկ, ասում է Բէրնար-դը-Վանտադուր, որոնց եթէ մի ոսկ է յաջողութիւն պատահի՝ աւելի գոռոզանում և վայրենանում են. իսկ ես, երբ Աստուած ինձ ղրկում է սիրելուս մի հայեացքը՝ այդ ես իմ մէջ աւելի սէր եմ զգում դէպի նրանց, որոնց ես արդէն սիրում էի“: Սէրը և ամեն տեսակ սիրոյ աղբիւր էր:

«Ինչպիսի՜ հրաշքներ կը գործէի ես, բացականչում է Գիլեոմ-դը-Սէն-Դիդիէ, եթէ նա պարգևէր ինձ միայն մի հատը այն մազերից, որոնք ընկնում են իւր վերմակի վերայ, կամ իւր ձեռնոցի մի մասը...“: Սէրը հերոսութիւն էր:

«Ես մի ասպետ էի, ասում է Բէնուադը-Վարքէռօ, իսկ այժմ մի հարուստ սինեօր. մենք նուաճեցինք Թէսալոնիկեան թագաւորութիւնը, բայց ես այն ժամանակն էի աւելի հզօր զգում, երբ սիրում էի և սիրվում»: Սէրը մի պատուասիրութիւն էր դէպի սխրագործութիւնները, երբ աւելի վեհ էր հանդիսանում՝ քան նոյն իսկ աշխարհակալութիւնը:

Ուրեմն՝ սիրուհու ազդեցութիւնը ամփոփում էր իւր մէջ ամբողջ կեանքը: Այն ժամանակ կանայք հանդիսանում էին [illegible]՝ լինելով պատուաւորներ իրենց սիրահարների գործողութեանց, իշխողներ նրանց մտքերի վերայ, մխիթարողներ և խորհրդատուներ: Տրուբադուրը իւր սիրուհուն անուանում է «mon Seigneur» (իմ տէրուհի):

Առաջին անգամ այսպէս էր կերպարանավորվում սիրուհու մէջ Վէներա-Ուրանիայի պաշտելին. սակայն այդ յաղթութիւնը չը կարողացաւ մնալ առանց պատմութեան, առանց պատերազմի, որովհետև Ուրանիան միայն հոգի է ներկայացնում, բայց որում սիրուհու հետ միասին բարձրացրեց գըլուխը և մէկտեղը (տէրուհին)—Պօլիմնիան: Տրուբադուրը Պէտրարկան հակառակութեան և թշնամութեան մէջ էր Բէրնարդ-դը Վանտադուրի հետ, Բոկաչիօն և Արիոստոն՝ Դանտէի և Պէտրարքի հետ և այդ պատերազմի մէջ իւր կու տեսակ սիրոյ բնաւորութիւն կար. հետևաբար դրանից առաջ եկած ըղձացմունքները աւելի յաղթող էին և զօրաւոր:

Հոգեկան սիրոյ հետ միշտ խառն էր յարգանք դէպի կինը. սակայն զգայական սէրը միշտ քողածածկում էր ատելութիւն, նաև մի տեսակ արհամարհանք դէպի կինը:

Հոգեկան սէրը մի տեսակ տարօրինակ բարոյական միութեան պատճառով հաշտութեամբ մարդկանց մէջ խառնուած էր հայրենասիրութեան հետ: Ընդհանրապէս՝ զգայական սիրոյ զուգընթաց բոլոր երգիչները իրենց հայրենիքի գործի մէջ հանդիսանում էին անտարբեր և շատ անգամ էլ դաւաճան: Պատուասիրութիւնը, [illegible], փառքի ծարաւը շատ անգամ նրանց սրտերում տեղ ունէին. բայց վեհութիւնը և անշահասիրութիւնը՝ երբէք: Դրանք քաղաքացիների հոգիները չէին:

Փոստերը այստեղ միշտ կարող են առաջնորդներ լինել:

Պէտրարկոն՝ Տրուբադուրների մէջ առաջինը՝ այդ կոպիտ զգացմունքները

---

*) Պրօվանսալեան բանաստեղծութիւնը Դանտէից առաջ սկսեց ծաղկել. սակայն նրա ամենալաւ ժամանակաշրջանը սկսեց Դանտէից յետոյ: Ծան. Յօդ.

տպարանում Թիֆլիս, Թուղթը և տիպը մաքուր են. գինն է 50 կ. Հռովմայեցւոց և Յունաց կեանքը միշտ հետաքրքրական են եղել և դժբաղդաբար մեր ժողովրդին անծանօթ։

—

Գոհունակութեամբ կը լսեմք թէ, Ֆրանսիայի Ռոյան քաղաքին մէջ 1876-էն ի վեր հաստատուած և Հանրապետական կառավարութենէն պաշտօնապէս ճանչուած «Աքատեմի տէ Միւզ Սանթոն» անուն գրական կաճառն՝ յատուկ նամակաւ առաջարկած է ազգային հանրածանօթ բանաստեղծ Ալէքսանդր էֆ. Փանոսեանի, որ հաճի ընդունիլ իրենց կաճառին անդամակցութեան կամ ատենակցութեան պատիւն։ Այս ընկերութիւնը վեց ամիսն անգամ մը մրցումներ և հանդէսներ կը կազմակերպէ, ուր ի մրցում կը դրուին բանաստեղծական հատորներ, ոչ թէ կտորներ, յորոց առաջին մրցանակի արժանացողը կաճառին կողմէ ձրիապէս կը հրատարակուի։ Բաց աստի, ամսեայ հանդէս մ՚ալ ունի, որոց չորս թերթերն միայն բանաստեղծութեան յատկացեալ են։

Ա. էֆ. Փանոսեան ընդունած է սոյն պատուաբեր առաջարկութիւնն։

(Հայրենիք)

—

Պեատիգորսկում Նշանաւոր բանաստեղծ Լերմոնտովին արձան կանգնեցնելու համար ժողոված նուիրատուութիւնների գումարը „Терскія Вѣдомости“ ասելով հասնում էր փետրուարի 1-ին 38,366 ռ. 67 կ.։

—

«Դրօշակ» լրագիրը բնագէտների ուշադրութիւն է դարձնում Մինգրելիայում գտնուող [illegible] ջրերի վերայ, որոնց բժշկական ազդեցութիւնը մի քանի հիւանդութիւնների վերայ աներկբայելի է և որոնք ճանապարհների բացակայութեան պատճառով անյայտ են մնացած։

—

ՇԱՐՈՒՐԻՑ.—Սօթը գիւղից բաղկացած Շարուրայ գործակալութեան հայ ժողովուրդը 31 առաջիկայ մարտի Երևան քաղաքում, նոյն անուն թեմի կողմից ընդհանուր պատգամաւորի ընտրութեան մասնակցելու համար իւր կողմից միաձայն ընտրեցին պատգամաւորներ, Շարուր—Դարալագիազի գաւառի պ. պ. Հաշտարար դատաւոր պ. Տէր-Ամբակումեանին և բժիշկ Ա. Շահավելյն և սրանց կանդիդատ Խ. Պարզիանցին։ Այս տեղ եղանակը վաղուց արդէն գարնանային է։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ.—Շատ անգամ լուռ ուղտ են չինում։ Հիւանդանում են մի քանիսները, բժշկական հետազօտութիւնից յայտնուում է ցաւի վարակիչ բնաւորութիւնը. բժիշկը պատուիրում է զգուշութիւն և հակավարակիչ միջոցներ գործ դնել։ Բայց դեռ խօսքը բժշկի բերանում, արդէն արձագանքը հասնում է քաղաքի քունջուպուճախներում,—թէ ցաւ կայ, հիւանդութիւն կայ, վարակիչ է և այլն, սարսափը տիրում է, և երևակայութիւնը ամեն բան մեծացնում է։ Ամբոխին չի կարելի մեղադրել։ Բայց ինչ պէտք է անէ մարդ, երբ այդպիսի, տասնապատիկ չափազանցրած լուրը յաջորդվում է եկեղեցւոյ բեմից փոխանորդի բերանից, ինչպէս պատահեց Ախալցխայում. երբ գեր. Հայր Խորէնը սոսկալի կերպով նկարագրեց այդ արհաւիրալից ցաւի տեսակը, նրա դիւրավարակիչ բնաւորութիւնը և հիւանդների թիւը մինչև 700-ի ցոյց տուաւ, որով և Ձեզ լուրը հաղորդողը սխալուեցաւ։ Այո, հայր սուրբը այդպէս անելով, բարի նպատակ է ունեցել, կամեցել է անմիջապէս ուշադրութիւն դարձնել տալ ցաւին վերայ, սակայն հետևանքը աւելի վնասաբեր զուցէ լինէր, որովհետև բառը թէպէտ թոյն չէ, որ վարակէ, բայց չափազանց երկիւղը և սարսափը թուլացնում է սրտոտներին և թունաւորում անողջներին։ Նախազգուշութեան, առողջապահական միջոցները գործադրելը միշտ հարկաւոր է մարդուն, սակայն արհաւիրք ազդելը այնքան վտանգաւոր է, որքան հիւանդութիւնը-ինքը։ Ուրախութեամբ սրտի հաղորդում եմ, որ [illegible] մաքրութեան վերայ սկսել են ուշադրութիւն դարձնել, բայց դեռ հեռու է քաղաքը մաքուր լինելուց։

—

Ս. ԽԱՉ-ՔԱՂԱՔԻՑ.—Ինչպէս պատմում են անցեալ ամիս ռուս Սօտնիկով գիւղում մի կնիկ երկուորեակներ ծնելու ժամանակ, ընկնում է սարսափելի երկունքի մէջ. մեծ չարչարանքով մինը ծնում է, իսկ միւսը բոլորովին դժուարանում է ծնել։ Բարեկամները խսկոյն հրաւիրում են փելդշերին, որև տալիս է քնեցնող կաթիլներ և յղի կինը այս դեղով յաւիտենս հանգստանում է։ Երկու օրից յետոյ այդ կնօջը թաղում են. հէնց նոյն օրը մի որսորդ անցնելիս գերեզմանատան միջով մի ձայն է լսում. որսորդը միւս օր միայն յայտնում է այս լուրը ննջեցեալների բարեկամներին, որոնք խսկոյն բահերով և թիակներով վազում են, փորում են գերեզմանը և ինչ տեսնում. յղի կինը միւս կողքին շուռ եկած, երեխան էլ վիժած ընկած ոտների տակը։

ԱՐՑԱԽՈՒ ԳԱՒԱՌԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

(Շարունակութիւն)

Հին Ջրաբերդի և Աջանանի գաւառներում գտնվում են հետևեալ աւերակները. այժմեան Շահարջիկ թրքաբնակ գիւղի մօտ Խնկանց գիւղի աւերակները. Շլորուտ, Ղըկալայ, Ձէյվա և Բաղաբերդի բերդերի աւերակները։ Բեխ հայաբնակ գիւղի մօտ Կանչախաբախ, Վահանայ-վանք և Հալիձոր Բերդերի աւերակները։ Թրքաբնակ Գարչիլու և հայաբնակ Գիւղգիւմ և Վաչաղան գիւղերի մօտ գտնվում են Կարանաւ, Ջուխուր-Իւրդ, Ալղինլու, Նոխուդլու, Աղքեանդ, Ղալաղամ, Իգլիս, Զայիգկօլ, Ղիլա-մէշայ, Ալմալըխ, Շլդըեան, Մարակերտ, Մարալ-Խալգաբան, Աղդժագքէօրալան, Սալվաղ, Օրբալուղ, Խանազեադ, Սաւղիլան և Սեաքոյ գիւղերի աւերակները։ Այժմեան Հաջի-Սամլում և Ղարաչարլուում գտնուում են հետևեալ գիւղերի աւերակները. Կօրքէչեչ, Սանասար, Աբուլքիւրդի։ Սրանք Մինքեանդ գիւղից շատ հեռի չեն Ուրազլար, Զագազուր քրդաբնակ գիւղերի մօտ։ Կան նաև աւերակներ Ղարաբայրամլըղ և Ամզալլըսի մօտ։

Սիսեանում կան.

Արաւուս՝ քրդաբնակ Շխլարի մօտ. Բէջմուր և Բէջմեայ՝ քրդաբնակ Աղաբի և Վաղարի գիւղերի մօտ. Ղօնաղգէօրմազ՝ հայաբնակ Բռնակոթի մօտ. Շամախի՝ թուրք Շաքի գիւղի մօտ. Ալաջի՝ հայաբնակ Տօլաբա գիւղի մօտ. Խընդուզ՝ թրքաբնակ Շէիքքեար գիւղի մօտ. Խաչակապ՝ Օրտոն քրդաբնակ գիւղի մօտ։ Մի աւերակ էլ Ղարա-խան Բէգլուեցւոց ամարանոցի մօտ, մի ուրիշն էլ Ախլաթեան և Տօլորս գիւղերի մօտ։ Բազարչայ անուանեալ գիւղից 2—7 վերստ հեռաւորութեամբ գտնվում են Աղրաբան, Մարգիմագլու, Սումաղլու-Ղըլը, Տիմրավ, Սար-Բուլաղ և Մուխորդուլեան գիւղերի աւերակները։ Այս վերջիններում 25 տուն Տաթևացի հայեր խնդիրք են տուել, որ իրենց թոյլ տան գիւղ գցելու։ Վայոցձորի գաւառում Խորսեան՝ Աղանձ-Սուաբանց հայաբնակ գիւղի մօտ։ Այժմ այստեղ բնակվում են 4 տուն թուրքեր, բայց հինուց եղել է Ալան թագաւորի արքայանիստ քաղաքը։ Սկսած այստեղից մինչև այժմեան Քիւրդդար գիւղը 3 վերստ հեռաւորութեամբ տարածութիւնը ծածկուած է աւերակներով։ Այստեղ կան շատ կամարաձև շինութիւններ։ Աւերակ են նաև Տանձաւոր և Ազուանի, ուր 30 տարի առաջ բնակվում էին Տաթևից, Խոթանանից և Լծենից եկած հայերը, բայց այժմ քիւրդ Սուլթանովների ձեռքումն են։ Մոզիկի աւերակներն գտնվում են թուրք Ալմալըխ գիւղի մօտ, Սուսանինը՝ համանման լեռան վերայ։ Այստեղ 60 տարի առաջ բնակվում էին Ակուլեցի հայ բէգեր, իսկ այժմ Խոջէկեցուց վարելահողերն են։ Ղզլվանքի աւերակները գտնվում են Արծուանիկ գիւղի մօտ Ջուանուխի-Քէարվասի անտառում։ Կորիսից Արծուանիկ գնացող ճանապարհի վերայ. մի 30 տուն թուրք և քիւրդ ցանկութիւն ունին այստեղ բնակութիւն գցելու։

Կան նաև ուրիշ շատ աւերակներ, որոնք մեզ տակաւին յայտնի չեն. կասենք միայն, որ յիշած աւերակներում ամեն տեղ չնչին բացառութեամբ կան եկեղեցիներ կամ եկեղեցիների աւերակներ, գերեզմանատներ, որոնց արձանագրութիւններից երևում է, որ դրանք հայի գիւղեր են եղել։ Այժմեան շատ թրքաբնակ և քրդաբնակ գիւղերում կան եկեղեցիներ կամ սրանց աւերակները, հայոց հանգստարաններ, մառաններ, կարասներ, շինութիւններ, որոնց թուրքերը կոչում են „Գեաւուր-Դամ“ և այլն։ Անկասկած դրանք երբեմն հայաբնակ գիւղեր են եղել։ Յիշենք այդ գիւղերը։ Սիսեանում՝ Բազարչայ մալականաբնակ, Որոտնայ թրքաբնակ և քրդաբնակ—Խոզ, Վաղադի, Աղուդի, Շուքեար, Շաքի, Փուլ, Արաւսայ, Զոմարդլու, Արիքըր, Դոստակերտ, (զուցէ Դաստակերտ) Աղանք, Ըրթօրիս, Հաղիսամլում և Ղարաչորլում—Հոչազ, Մերեք, Հերեք, Վարազլուն, Մինքեանդ, Հալաք, Բայեանդուր, Բիշանիս, Խոզլու, Արտաշավայ, Վաչաղին, Բաղարդուզ (հինուց քաղաք), Զօուքէչեչ, Աղքօրվի, Փուլ, Սէիդլար, Սանասար, Սալլար, Բինաերի, Գարաքեանայ, Բաբադիմլու, Շովվա. Գարաչանլու Գիւղաձորայ գաւառում—Աղբեջ. Աղանանու գաւառում—Դոլղնի, Շարջգին (հայոց հին Եղինգն), Ղաթարն, Բաղգեաշ (հայոց Քռնգաշն)։ Գիլաբերդու գաւառում—Գիւն (հայոց Գոն)։ Բարգուշատու գաւառում—Գէօղալուլու, Խաշտաբ և Փիրջան (հինուց Խաշգար և Փառչանց)։ Այստեղ կենում են թուրքեր։ Զաւընդուրու գաւառում — Բարթաղն, Բարի-Բարթաղն։ Այս ժողոված նիւթերի մեծ մասը ապացուցանում են, որ Զանգեզուրը հինուց եղել է հայի բազմամարդ երկիր, սակայն այժմ հազիւ թէ իւր ձեռքին հայը ունենայ առաջուայ հողից ⅓ մասը։ Այս երևոյթը պարզ նկատվում է նրանով, որ հայերի հողերը աւելանում են և ընկնում թուրքերի, ռամիկների և քրդերի ձեռքը։ Հայերը թուով մահմեդականներից աւելի պակաս չեն, բայց չեն սիրում ապրել փոքր գիւղերում և գիւղատնտեսական մնչող պայմաններից ստիպուած են հին աւերակներում բնակութեան հիմքեր չը գցելու, մանաւանդ բէգական հողատիրութեան խրատինքը սարսափելի ազդելք է ներկայացնում հայերին։

Համեմատելով այժմեան դրութեան հետ Մագիլևսկու վիճակագրութիւնը, որ եղել է սրանից 60 տարի առաջ՝ մենք տեսնում ենք, որ այս ժամանակամիջոցում հիմնուել են հետևեալ հայ գիւղօրայքը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱ, 18 փետրուարի.—„Նոր-Դար“-ի № 15-ում դետեղած Թաւրիզի թղթակցութեան առիթով մի քանի խօսք չասել միանգամայն անկարելի ենք համարում։ Այդ յօդուածի առաջին տպաւորութիւնը զգացնել է տալիս, որ ով և լինի այդ Պարսկահայը, սակայն նրա գանգատը Ատրպատականի ծանր դրութեան մասին բխում է անկեղծ ցաւով լցուած սրտից։ Ատրպատական դեռ անմշակ երկիր է, պէտք է ուսումնականների թիւը այնտեղ աւելացնելու շտապել, նրանց դրութիւնը ապահովեցնելու արտոնութիւններ ստանալ։ Այս հանգամանքները 'ի նը-

---

մի canzone-ի մէջ այսպէս է արտայայտել. „Կանայք, մի կարծէք, որ ինձ կստիպէք տանջուել... ես կամենում եմ անյապաղ օգուտ քաղել ձեզնից, կանանցից, որոնց քնքշութեամբ սիրում եմ“։ Ով ձեզնից ինձ ասէ „ոչ“, թող համոզուի, որ ես նրան կը ձգեմ»։ Եւ ինչ։ Այդ միևնոյն Պերդիգօնը կոչեց իւր երկրի վերայ Ալբիգոյեան խաչակրաց պատերազմի թշուառութիւնները։ Պերդիգօնը միացաւ արաս Սիմոնի և Տուլուզեան եպիսկոպոսի հետ պապի բարկութիւնը գրգռելու համար. Պէրդիգօնը կաթոլիկ վէճաների կատաղող դարձաւ. նա դարձաւ Պրովանսի թէ պատերազմական և թէ բանաստեղծական փառաց առաքեալ։

Դանտէ և Պետրարք՝ սիրուհու զուտանարատ երգիչներ՝ Իտալիայի ամենաջերմ հայրենասէրներն էին։ Դանտէն դժոխքի մէջ խորհում է իւր երկրի վերայ. նա մտածում է իւր հայրենիքի վերայ դրախտի հրճուանքների և բաւականութեանց մէջ։ Իտալիայի պատկերը նրան հետևում է բոլոր աշխարհների մէջ. ինչ էին նշանակում այն յանկարծակի դառնալը երկինքից երկիր՝ եթէ ոչ իտալական հոգւոյ յուզմունքը, որը Իտալիայի թշուառութիւնները տեսնելով և յուսահատուելով՝ աղաչանքներով և պաղատանքներով դիմում է այն բոլորին, ինչը միայն կարող է Իտալիան՝ իւր հայրենիքը փրկել և առաջուց դիմում է հաշտարարին՝ Աստուածանից ընտրեալին։

Պետրարքը՝ Ալիգիէրի արժանաւոր եղբայրն է։ Նրա Րիէնցիին ուղարկած նամակից իւրաքանչիւր ժողովրդի սիրտը բաբախում է։ Լաուրա և Հռովմ—ահա նրա բոլոր մտածողութեանց երկու առարկաները։ Նոյն իսկ նրա դէպի լատինական լեզուն ունեցած սէրը նրա դէպի իւր հայրենիքը ունեցած սիրոյ մի ձևն էր, նրան երևում էր, եթէ խօսենք Կանտոնների և Բրուտների լեզուով, որ նա դրանով մի բան էր խլում այդ հին և փառաւոր հռոմէական հասարակապետութիւնից և որը ցանկանում էր իւր սիրած Իտալիայի համար։ Պլատոնական սրտերը—հայրենասէրների սրտեր են։

Ո՞վ էր, ընդհակառակն, այդ ժամանակաշրջանում Վեներայի պաշտպանը։ Մի Ֆլորէնցիացի, որ փախած էր Ֆլորենցիայից, Րօբերտ թագաւորի պալատականը, մի մարդ, որ անբարոյական պատկերների շրջանակով իւր երկրին աղէտալի թշուառութիւն պատճառեց, մի մատենագիր, որ պախարակել և արհամարհել էր այն մի և նոյն կանանց, որոնց պաշտել էր—„Դեկամերոն“-ի հեղինակը։ Բոկաչիօ, Լաուրա և Բէատրիչէ հասարակ բուրժուազներ էին, որոնց Դանտէ և Պէտրարք թագուհիներից գերադասեցին։ Բոկաչիօն սիրում էր թագաւորի աղջկան, որին հանդէս է բերում իբրև մի տեսակ խառնակեցիկ կին *)։

Այդ տեսակ սէրը միշտ խառն է բարոյական վերաւորանքի և արհամարհանքի հետ։ Crudelis et immeror voluptas—թուլամորթ մարդը ապերախտ է և անգութ։

Վերջին ժամանակներում Իտալիան օր աւուր վերայ կորցնում է իւր ազգայնութեան զգացմունքը և ովք են նրա բանաստեղծները։ Կախարդիչ և անբարոյականացած Արիոստը, կէս-քրիստոնեայ և կիսահեթանոս Տասսոն։ Ո՞չ ապաքէն „[illegible]“ հերոսուհին Արմիդան չէ, Արմիդան, որ վերցնում է Վեներայից նրա հիւսած գօտին—Di teneri degni, e di cari vezzi, և որը Րինալդից շինում է այն՝ ինչոր Օմֆալան շինում է Հերքուլէսից։ Որքան հեռի ենք մենք Դանտէի երկնային առաջնորդից... Մինչև անգամ Օլինդի և Սոֆրոնիայի անմեղ սիրոյ պատկերը մի տեսակ կեղտոտ և կոպիտ կերպարանքով է նկարվում։ Օլինդը՝ կապուած այն մի և նոյն խարոյկի վերայ, որտեղ և Սոֆրոնիան է՝ մինչև անգամ ուրախ է, որ նրա հետ միասին մահանալ է այդ խարոյկին, թէպէտ չը կարողացաւ մասնակից լինել նրա անկողնուն—Del rogo asser consorte, se dol letto non fui։ Իսկ երբ խարոյկի բոցը շրջապատում է Օլինդին, նա ցաւում է, որ իւր հոգին չպէտք է մտնի իւր սիրածի սիրտը — Lanima mia nella bocca tuaio siri։

Այս ազգային Իտալիայի մէջ միայն մի անաչառ Միքէլ—Անջէլօ պահպանում է Դանտէի այդ գերագոյն—բանաստեղծական աւանդութիւնը։ Նրա սօնէտները և անբիծ կեանքը նուիրվում են մի ուրիշ Բէատրիչէի. սակայն իբրև անցած, հնացած դարու ուշացած զաւակ՝ նա ամփոփւում և մնանում է մէն-մէնակ, նման անցեալի այն վիթխարի բեկորներից մէկին, անցեալի, որից ներկան փախուստ է տալիս մի տեսակ ամօթանքով և երկիւղով, կամ աւելի եւ՝ նման այն աքսորեալին, որի օրերը անցնում-սահում են հայրենիքի մէջ, բայց որը կորցրել է իւր հայրենիքը։

XV-րդ դարու կէսումը Ֆրանսիայում բորբոքուեցաւ երկու տեսակ սիրոյ պատերազմ։ Մի կողմից ցինիքական և եղծական „Roman de la rose»-ը Matheols, Guillaume Alexis և նրա „Blason des amcurs“-ը, միւս կողմից՝ երևան հանդիսացաւ անհամար, եռանդուն, գեղեցիկ կին՝ լի և գեղուն բանաստեղծական հանճարով, գիտութիւններով — Քրիստին Պիզանեան։ Հայրենասիրութիւնը միշտ երևան է լինում միևնոյն սրտի մէջ պլատոնական սիրոյ։ Կարօլոս VI-ի թագաւորութեան ժամանակ, երբ ներքին սոսկալի քաղաքական երկպառակութիւններ էին տիրում, Քրիստինէն արտասուալից նամակներ է գրում Իզաբէլլայի, Բուրգոնիայի և Բէրրիայի հերցօգների վերայ Պէտրարքի նման պաղատելով „խաղաղութիւն, խաղաղութիւն։“ Այս բոլոր ֆրանսիական արիւնը, որ հոսում է՝ կարծես նրա սեպհական կրծքից էր դուրս ժայթքում։ Երբոր երևում է Յովհաննա դ'Արկը, Քրիստինէն դուրս է գալիս մենաստանից, որտեղ նրա վերջին օրերը անցնում էին, գալիս, որ այդ դիւցազնական աղջկան ընդհանուր երախտագիտութեան երգ երգէ։ Ֆրանսիան ազատում են և բարեհաջողում մի անարատ, անբիծ այրի և մի անարատ կոյս Քրիստինէ և Յովհաննա դ'Արկ։

Կ. Տ.—Ա.

---

*) Բոկաչիօն սիրում էր Մարիամին՝ Րօբերտ թագաւորի աղջկան, որին անուանել է „Դեկամերոն“-ի մէջ Ֆիամետտա։ Նրա վերջին շարադրութիւնը կանանց դէմ մի անգութ երգիծաբանութիւն էր։

կատի պէտք է առնել, ուրեմն այստեղ պէտք է մի ջերմեռանդ, անձնազոհ և խելացի Թեմակալ, որը իւր բոլոր գոյութեան նպատակ դարձնէր այդ հայաբնակ մեծ թեմի ընդհանուր բարօրութիւնը, քրիստոնէական մաքուր վարդապետութեան տարածելը, ամէն մի բոպէ պատրաստ լինէր և ամէն կերպ աշխատէր յագեցնելու ոչ միայն ժողովրդի կրօնական ծարաւն, այլ և գործով պաշտպանէր, մխիթարէր և առաջնորդէր ժողովուրդը զանազան հասարակական հարցերում և առօրեայ կեանքի պարագաներում։ Հանգուցեալ ս. Մուշեղեանի անխոնջ գործունէութեան օգտակար օրինակը ս. Սինոդը պէտք է ուշադրութեան առնէ անմիջապէս այս բոպէում, առանց ուշացնելու վրահասու լինի ժողովրդի բողոքին, հետամուտ լինի նոր առաջնորդի պապական և խանական ձըգտումներին։ Ժողովրդին հարկաւոր է մի վեհանձն և անկեղծ սրտացաւ հովիւ, որ մոռանայ իւր անձը պայքարի ծանր բոպէներում, մտաբերէ նախնի քրիստոնէական առաքեալների Աստուածային ոգևորութիւնը և եռանդը, մտնէ և ձիւնոտ և եղեանի տունը, ուսումնասիրէ, ծանօթանայ և օգնէ, իսկ մեր առաջնորդը „վեհական“ է ստեղծում իւր համար, կարծես,—մօլլաները պիտի ակնածեն և պաշտպանեն մեր եկեղեցին վտանգից։ Կարծես թէ բացի հոգևորականութիւնից մենք ունինք մի ուրիշ դասակարգ, որի պարտականութիւնն է հսկել եկեղեցական շահերի վերայ և պաշտպանել ժողովրդի աւանդական սրբութիւնները, ազգային լեզուն և հաւատը Ս. Սինոդի և ժողովրդի համար զանազան անձնաւորութիւնները նշանակութիւն չունին, այստեղ եկեղեցին է կորչում, պատմական աններելի սխալ է գործվում, եթէ անյապաղ չեն փոխվում այն առաջնորդները, որոնք անհամապատասխան, անընդունակ են ստանձնած պաշտօնին։ Պէտք է ժողովրդին յուսահատութեան չը հասցնել, չ'թողնել որ ամբողջ բարոյական անկման տագնապի մէջ ընկնէ և դառն կասկածանօք բացականչէ։

«Ո՞ւր է այն հզօր քրիստոնէութիւնը,
Որ կամէր բերել մեզ ազատութիւն,
Որ կամէր մեր բեռն թեթևացնել,
Եւ բոլոր աշխարհ լուսով ծածկել, *)

Պէտք է նշանակել մի եռանդուն, պարզ և Աստուածասէր ծանօթ հոգևորական։

Գ.

ՊԵՏՐՈՎՍԿ. 15 փետրուարի.-Ռուսիայի հզօր Տէրութեան Կովկասու և Անդրկովկասու տիրապետելուց յետոյ երկրի կենսական հանգամանքները փոխուեցան, կենցաղավարութեան ձևերը այլայլուեցան. զգալի կերպով յայտնուեցան նոր գաղափար, նոր ուղղի որոնց հետևելու դէպքը զգացվում էր, որովհետև պարսկական ձևերը, կեանքի վերաբերեալ կազմած գաղափարները միանգամայն չէին համապատասխանում տարրերի պահանջներին։ Երկրի բնակիչների մի փոքր մասը բարեբախտաբար հասկացաւ, որ այդ բոլոր պակասութիւնները կարելի է ուղղել ուսման միջոցով, ուստի և իւր մատաղ սերունդը ուղարկեց դպրոց, իսկ մնացեալ մեծամասնութիւնը արհամարհեց այդ ընթացքը, կարծելով թէ ուսումը յատկացրած է միմիայն հոգևորականներին, բայց աշխարհական դասակարգի համար աւելորդ բան է. վասնորոյ իւր համար ընտրեց փող աշխատելու խանութը, ինչ միջոցով էլ որ յաջողուի։ Այսպէս երկու մասն էլ ընթանալով մի անգամ որոշած ճանապարհով՝ պինդ պահպանում էր բռնած դիրքը։

Այստեղ մենք ուզում ենք մի քանի նկատողութիւն անել մեծամասնութեան բռնած ընթացքի վերայ։

Փող վաստակելու համար հարկաւոր էր գնալ հեռու քաղաքներ, վասնորոյ շատերը վստահացան ոչ թէ մտնել Ռուսիայի խորքերը, այլ և մինչև անգամ անցնել արտասահման. այդ անձինքները՝ իբրև առևտրական՝ շրջելով լուսաւոր երկիրներում Եւրոպայի քամիից զիւռչում էր դրանց քթերին, և ահա քանի ամսից յետոյ վերադառնալով հայրենիք՝ իրենց անուանեցին „լուսաւորեալ“, առաւելապէս ասելով ցիվիլիզովաննիյ“. Խեղճ տեղացիները իսկոյն սովորեցրին „լուսաւորութիւն, ցիվիլիզացիա“ բառերը, և այդ նոր բառերը խօսակցութեան միջոցին իւրաքանչիւր նախադասութեան մէջ քանի անգամ կրկնվում են, չը նայելով որ գրել հագիւ թէ գիտեն։ Այդ տեսակ պարոնները օտարութիւնից վերադառնալով հայրենիք փոխանակ իրենց հետ տարած նահապետական հագուստի և կօշիկների Եւրոպայի ճաշակով կարած հագուստով, շլեապով, կօշիկներով, ձեռնոցներով և այլն և այլն։ Դրանք հաւատացրին տեղացիներին, թէ միմիայն այդպիսի լուսաւորութեամբ կարելի է հասնել մարդկային կատարելութեան բարձր աստիճանին և թէ այդ է լուսաւորութիւնը։ Դրանցից օրինակ վեր առնելով հասարակութեան մեծամասնութիւնը սկսեց հագուստը փոխել, հետևել նոր ձևերին, ուշ քնել, ուշ վերկենալ, գիշերը ցերեկ դարձնել, մանր աշխատանքից խոյս տալ, աղքատ, արուեստաւոր և միջակ դասակարգի հետ ծանօթութիւն չ'անել, այս բոլորը նրանք այժմ անուանում են՝ „լուսաւորութիւն, ցիվիլիզացիա“։ Հենց այժմ էլ նոյն անունը ստանալու համար հարկաւոր է միայն մի երկու անգամ գնալ առնվաճառ կամ մի այլ յայտնի քաղաք ու վերադառնալ նոր ձևի հագուստով ու ձեռափայտով կամ ակնոցներով... Հաւատացնենք, որ այդպիսին տեղացիներից իսկոյն կը կոչուի լուսաւորեալ, չը նայելով, որ այդ տեսակ մարդիկը միմիայն արտաքուստ են լուսաւորեալ (կերպարանափոխեալ), իսկ 'ի ներքուստ միևնոյն գաւառացիներն են, և դեռ փչացած....

Թող ընթերցողները ներեն ինձ որ մի երկու խօսք կամ կարծիք յայտնեմ այդ տեսակ կրթեալ, չեմ ասում անկիրթ, մարդիկների մասին։

Երբ ընդհանուր հայեացք եմ ձգում նոյն տեսակ մարդկանց կենցաղավարութեան վերայ, իսկոյն պարզ տեսնում եմ, որ նրանք չեն հասկանում „լուսաւորեալ“ բառի բուն նշանակութիւնը, այլ թէ նրանց բոլոր աշխատանքը, պարապմունքը վերաբերում է մօդային, նոր և արտաքին ձևերին, որով և վարակում են շատերին, առաւելապէս թոյլ բնաւորութեան տէր գեղեցիկ սեռին. նոր սերունդը նայելով շրջապատող կեանքին՝ հետևում է նրան. հետևանքը լինում է ծուլութիւն, դատարկութիւն, արհամարհանք դէպի աղքատ, հասարակ և աշխատաւոր դասը, իսկ թէ այս ամենը ապագայում ինչ պտուղներ են տալիս, դա յայտնի է ամենին։

Նոյն անձինքը պիտի հասկանան, որ լուսաւորութիւնը պէտք է դուրս գայ ուղեղից, մաքուր սրտի և ազնիւ բնաւորութեան լաւ կրթութիւնից այլ ոչ թէ արտաքին ձևերից, ինչպէս որ նրանք են կարծում։ Երբ նրանք կը հետևեն այս ճիշտ կանոնին, այն ժամանակ կը հասկանան, որ լուսաւորութիւնը աղաւաղելով ներմուծել են անմիտ մօդաներ, նոր ձևեր և կերպարանափոխութիւններ։ Եթէ առանց արեգակի լուսինը կը փայլի, նոյն պարոնները էլ առանց ուսման և դաստիարակութեան «լուսաւորեալ» կը դառնան։

Կովկասում և Եւրոպայում արեգակը միաժամ չի ծագում. այս երկիրների կեանքի պայմանները շատ զանազան են միմեանցից. բնակիլ Կովկասում, հետևել Եւրոպայի կենցաղավարութեան ճշտութեամբ,—կատարեալ մոլորութիւն է. ուր ձեռը չի վաստակում, ճակատը չի քրտնում այնտեղ չը կայ և հաց. չը գործել, չը վարուել համաձայն տեղական պայմանների և հանգամանքների — կուրօրէն յամառ յետադիմութիւն է։

Յօդուածովս ես զարթեցրի այս հարցը, յուսալով, որ դրան մշակած կ'արծարծեն նրանք, որոնց գրիչը ճարտար և զօրեղ է. նրանք մեծ երախտիք արած կը լինեն Կովկասի և Անդրկովկասի բնակիչներին, եթէ կարողանան լուսաւորութիւնը կերպարանափոխութիւնից, մօդայից և ձևապաշտութիւնից որոշելը սովորացնել։ Այս ախտը խոր արմատ է ձգել մեր մէջ և մեծ թշուառութիւններ է պատճառում։

Գ. Ս.

---

*) „Հանի վիշտը“ Ս. Շահազիզեանի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԻՑՍԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԸ։— Այն փոքրիկ ատրճանակը, գրում է „New-York Herald“ լրագիրը, որով միսս Դօդլէ կամենում էր այն աշխարհը ուղարկել երևելի Օ'Դօնովան Րոսսին, այնքան քիչ ոյժ ունէր, որ նրանից արձակուած երեք գնդակից երկուսը չին կարողացել պատառել մինչև անգամ նրա վերարկուն և միայն Երրորդը կարողացել է ամենաթեթև վէրք պատճառել նրան։ Եւ ահա այստեղ երևաց այն մարդու յուսահատ վախկոտութիւնը, որը իւր թերթով դրդում էր մարդոց սպանութիւններ, հրդեհներ և դինամիտական ճայթումներ գործելու. Օ'Դօնովան Րոսսը փոխանակ միսս Դօդլէյին բռնելու և նրա ձեռքից ատրճանակը խլելու, ողորմաբար օգնութիւն կանչեց։ Եւ այս այն մարդիկներ են, որոնք բռնութիւն են քարոզում։ Զարմանք է, ասում է „New-YorkHerald“-ը, ինչպէս են նրանք համախոհներ գտնում, որոնք փող չեն խնայում նրանց չար նպատակների համար։ Անիշխանականները (անարխիստ) և ընկերավարականները (սօցիալական), շարունակում է միևնոյն լրագիրը, առիթ ունեցան մի անգամ էլ համոզուելու, որ Ամերիկան բերրի հող չէ ներկայացնում իրենց մտադրութիւնների համար, եթէ վերջինները բացի դատարկ խօսքից, ուրիշ ոչինչ չունեն։ Ամերիկայում ամեն մի մարդ կարող է բացարձակ ու ազատ խօսել, ինչ նրա սիրտը ուզէ, բայց միայն երբ կը կամենայ մի այնպիսի բանի ձեռնամուխ լինել, որ համաձայն չէ տիրապետող օրէնքներին, նրան շատ հասկանալի կերպով իմաց են տալիս որ բռնութիւնը անտանելի է։ Սրա ամենաճիշտ ապացոյցը կարող է լինել անիշխանականների փորձած անյաջողութիւնը զօրով ընկերավարականների ժողովը ցրուելու։ Այդ տեղի ունեցաւ հէնց այն օրը, երբ Դօդլէյ հանդիպեցաւ Օ'Դօնովան Րոսսին։ Ահա թէ ինչ է հաղորդում «New-York Herald»-ը այս անցքի մասին։ „Փետրուարի 2-ին երեկոյեան ժամու տեղի պիտի ունենար ընկերավարական բանուորների ժողովը. խօսակցութեան առարկայն պէտք է լինէր „Լոնդոնի վերջին ճայթագործութիւնները և ընկերավարականները“։ Այստեղի գերմանական անիշխանականների կուսակցութիւնը, որի պարագլուխներն են յայտնի Մոստը և Շվաբը, չը համակրելով միջակ ընկերավարականներին, վճռեցին ցրուել ժողովը։ Բայց սակայն սա այնպէս հեշտ չէր, ինչպէս երևում էր և մի դարհուրելի կռիւ ծագեց երկու հակառակ կուսակցութեան համախոհների մէջ։ Երբ աղմուկին վրա հասաւ նահանգական ոստիկանապետը իւր հինգ շարքը սպառած ոստիկաններով, հնչուեցան այս տեսակ ձայներ. «Ջարդեցէք ոստիկանութիւնը, ջարդեցէք նրան մինչև 'ի մահ»։ Այս գոռաց անիշխանականների պարագլուխ Շվաբը։ Իսկոյն խառնիճաղանջ ամբոխը ընկաւ ոստիկանապետի վերայ և սկսեց ամենակոպիտ յիշոցներ տալ նրան, բայց սակայն նոր ոստիկաններ օգնութեան գալով, յաջողուեցաւ ոստիկանութեանը ցրուել ժողովը։ Շվաբը նախապէս կալանաւորուեցաւ և ապա ոստիկանական հարցու փորձից յետոյ 2,500 դոլլար երաշխաւորութիւն ներկայացնելուց յետոյ դուրս թողնուեցաւ։

ՄԻՋԻՆ-ԱՍԻԱՅԻ ՀԱՐՑԸ։—Փետրուարի 10-ից (22-ից) հեռագրում են Կալկաթայից «Times»-ին հետևեալը. „Այստեղ խիստ տպաւորութիւն գործեց Անգլիայից ստացած հեռագիրը Լեսսարի և Բրիտանական կառավարութեան բանակցութիւնների մասին Աֆղանստանի սահմանագծին վերաբերեալ։ Ամէնքը համոզուած են, որ թէ Ռուսիան օգուտ քաղեց մեր Եգիպտոսում ունեցած դժուարութիւններից, պահանջելով միջանից այն ինչ որ մեզ համար անկարելի է, եթէ որ Լեսարի առաջարկած եզերագիծը ընդունվէր, այն ժամանակ հարկաւոր կը լինէր անյապաղ մեծացնել նշանաւոր քանակութեամբ ինչպէս եւրոպական, այնպէս էլ մեր հնդկական զօրաց թիւը և միշտ նրան պատրաստ պահել, ինչպէս որ հարկաւոր դէպքում օգուտ տալ մեզ։ Լորդ Դիւֆֆերինի ներկայութիւնը Հնդկաստանում, որի փորձառութիւնը լաւ յայտնի է և որը հեռու է ամենաեսամոլական արագագրութիւնից, կարող է բաւականին գործին օգնել, եթէ մինիստրութիւնը կը կամենայ հետևել նրա խորհուրդներին։ Տեղական մամուլը շատ է հետաքրքրվում Միջին-Ասիայի հարցովը և ընդարձակ յօդուածներ է նուիրում ռուսական առաջարկութիւնների քննադատութեան։ Տեղական մամուլի տուած խորհուրդները միմիայն վայրենի են և ցոյց են տալիս, որ դեռևս չըգիտեն գնահատել գործը քաղաքական և ռազմագիտական կողմից։ Այսպէս լրագրներից մէկը հաւատացնում է, որ մեր դրութիւնը կը զօրեղացնենք, եթէ կը տանք Պենջաբի անդրհնդկական նահանգները էմիրին և նրանց տեղ կը վերցնենք Կանդագարը, Գելմունդի նահանգը և Հերատը։ Իսկ ինչ որ կը վերաբերուի Ռուսիայի առաջարկութիւններին, տեղական թերթերը ուղղակի Հնդկաստանի համար ճշգրիտ սպառնալիքների տեղ են ընդունում։ Այսպիսի համոզմունք տիրապետում է ամեն տեղ Պեշաւերից սկսած մինչև իսկ Կալկաթան։ Ռուսաց կառավարութեան գործակալները հանգիստ գալիս են Կաբուլ, որտեղ նրանց պատուասիրում են։ Աֆղանստանում սպասում են ապստամբութեան և վաճառականները պատրաստում են Հնդկաստանում զէնքեր գնել։ Լուր կայ տարածուած նմանապէս, որ գնդապետ Պրժևալսկուն, որ ներկայումս կրկին Խանաբարհում հետազօտում է Հիւսիսային Տիբեթը, հրամայուած է յարաբերութիւն գցել Նեպոլի հետ։ Այս լուրը, եթէ մինչև անգամ սուտ է, ցոյց է տալիս, այնուամենայնիւ, որ մենք պէտք է պատրաստաւոր ուշադրութիւն դարձնենք մեր յարաբերութիւնների վերայ դէպի Նեփալը, և պահանջել, որ այս երկիրը թոյլ տայ բրիտանական հպատակներին ազատ մուտք գործել և որ անգլիական ներկայացուցիչը փակուած չը մնայ Խատմանդում։

—„Times“ լրագրին փետրուարի 21-ից գրում են. „Մեր պատերազմական վիճակը ներկայումս նոր օրէնքների շնորհիւ բոլորովին այլ է, քանթէ էր Ղրիմու պատերազմի միջոցին։ Այժմ մենք ունինք 40,000-ից աւելի փորձուած զինուորներից կազմուած պահեստի զօրք և 30,000-ից ոչ պակաս կամաւոր զինուորներ, որոնք բաւականին պատրաստուած են պատերազմական գործունէութեան համար։ Այսպէս ուրեմն 'բացի մեր մշտական զօրութիւններից, մենք ունինք ևս մի առանձին զօրք 70,000-ի չափ, որը մենք կարող ենք ուղարկել այնտեղ, որտեղ միայն հարկաւորութիւն կը զգացուի։“

ԱՆԳԼԻԱ.—Փետրուարի 8-ին կայացաւ անգլիական պարլամենտի երկրորդ նիստը. երկու պալատին էլ կարդացուեցաւ թագուհու գահական ճառը որի մէջ յայտնուած է, թէ Սուդանի վերջին անցքերի պատճառաւ այն զօրքերը, որոնք պէտք է արձակուէին՝ մնում են դարձեալ ծառայութեան մէջ և բացի այս՝ շուտով կը հաւաքուի կամաւոր զինուոր։ Լորդերի պալատում լորդ Դերբին, և պատգամաւորների պալատում Գլադստոնը գովաբանեցին իրենց գաղթական երկրների հայրենասիրութիւնը, որոնք առաջարկել են զօրքեր պատրաստել Սուդան ուղարկելու համար։ Բազմաթիւ հարցապնդումներին մինիստրութիւնների տուած պատասխաններից երևաց, որ Անգլիան ոչ մի դաշն չէ կապել Իտալիայի հետ Մասսուան գրաւելու վերաբերութեամբ և թէ կաբինետը ոչինչ չը գիտէ Իտալիայի դիտաւորութիւնների մասին Կասսալի և Տալայի վերաբերութեամբ. այլև,—որ ռուսների շարժումը Հերատի վերայ ճիշտ չէ, որովհետև Պետերբուրգի կաբինետը յայտնեց, որ Աֆղանստանը չէ մտնում նրա քաղաքական ազդեցութեան շրջանակի մէջ, բացի այս՝ Հերատում այժմս բանակուած են էմիրի բազմաթիւ զօրքերը, որոնք կարող են յետ մղել ամեն յարձակմունք. իսկ այն հարցապնդմանը, որ վերաբերվում է Եգիպտոսի ֆինանսական հարցի մասին եղած բանակցութիւններին հետևանքին՝ Գլադստոնը պատասխանեց, որ [illegible] տէրութիւնների մէջ այս առթիւ համաձայնութիւն է կայացել։ Այսուհետև առաջին մինիստրը պահանջեց պատգամաւորների ժողովից, որ ամեն անգամ, երբ օրակարգի խնդիրը կը գայ ընտրողական նահանգների բաժանողութիւն, գերադաս համարուէր այս վերջինը։ Գլադստոնի առաջարկութիւնը ընդունուեցաւ ձայների ստուար մեծամասնութեամբ։

ՍՈՒԴԱՆ.—Փետրուարի 12-ից հաղորդում են Լոնդոնից, որ ապստամբողները խիստ ջարդ կերան Կասսալէի մօտ և կորցրին 2000 հոգի։ Սուակիմի մօտ խմբուել են 20,000 ապստամբ։ Նոր հրահանգի համաձայն գեներալ Բրակենբերրին պէտք է մօտենայ Աբուգամեդին և իւր շուրջը պատնէշներ շինելուց յետոյ, ամառը անցկացնէ այստեղ։ Վոլսլէյը կը մնայ Կորտիում։ Խարտումի վերայ գնալը յետ է ձգուած մինչև աշունը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ռօթշիլդ եղբարց եկամուտը։—Ֆրանկֆուրտ քաղաքի Ռօտշիլդ եղբայրները, բարոն Վիլլի և Մայէր Ռօտշիլդները, 'ի նկատի ունենալով կանոնաւոր հարկադրութիւնը իրենց կարողութեան վերայ, որը նրանք այս տարի պէտք է վճարէին տէրութեան, պարտաւոր էին ճիշտ ցոյց տալ թէ իւրաքանչիւրը նրանցից որքան կարողութիւն ունի։ Այսպէս՝ Վիլլի Ռօտշիլդի ստացած տարեկան արդիւնքն իւր բոլոր կարողութիւնից հասնում է 4,788,000 մարկ, իսկ Մայէր Ռօտշիլդի տարեկան արդիւնքն—4,560,000 մարկ։

⁂

Վաշինգտոնի արձանը։—Ներկայումս վերջացել է Գէորգ Վաշինգտոնի նոր կառուցուած արձանը Վաշինգտոն քաղաքում։ Այս արձանը 555 ոտնաչափ բարձրութեամբ մի բուրգ է կամ կոթող և արժէ 1,200,000 դոլլար (մօտ 2,400,000 ռ.) Այս կոթողը վերջանում է Վաշինգտոնի վիթխարի արձանով և լուսաւորվում է ելեկտրական լուսով։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

22 Փետրուարի.

Պետական խորհրդի Բարձագոյն հրատարակուած վճռով թոյլ է տրվում միմիայն ռուսներին մշակել և օգուտ քաղել ոսկէ և ամեն տեսակ լեռնային հանքերից Պրիմորեան նահանգում և նրան շրջապատող կղզիներում։ Սակայն օտարերկրացիներին իրաւունք է տրվում յայտնի սահմանից տրուած հանքերի բաժիններում մշակել նրանց մինչև վերջնական արտահանութիւնը։ Այն օտարերկրացիները, որոնց թոյլ է տուած պարապել ոսկէ հանքի մշակութեամբ այս ներկայ վճռից առաջ, ցոյց կը տան օրինական կարգով օգտակար հանքերի տեղերը ոչ ուշ քան 1885 թ. սեպտեմբերի 1-ը, այս հանքերը կարող են յանձնուիլ և նշանակուած ժամանակամիջոցից առաջ։

ԱՍՏՐԱԽԱՆ. Քաղաքի առաջից Վոլգան շարժուեց։

ԼՈՆԴՈՆ. «Standard» լրագիրը լսել է, որ ռուսաց դեսպանին յանձնուած է, որ նա Ռուսիայի կողմից բարեկամական համաձայնութեան անկեղծ ցանկութիւնը արտայայտէ Անգլիային և թէ՝ որ ռուս զօրապետներին հրամայուած է այլ ևս առաջ չը գնալ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ.

—

22 Փետրուարի.

Լօնդօն—$25^3/_{16}$ $25^5/_{16}$— Համբուրգ—215, $215^1/_2$։ Փարիզ—$266^1/_{12}$, 266. Պօլուիմպերիալը—7 րուբ. 81 կ. սակարկ.։ Մաքսատան կուպոններ—7 ր. 80 կ. սակարկ։ Արծաթը—1 ր. 28 կ. սակ. Բօրսային դիսկօնտներ—$5^3/_4$ ր. և $6^3/_4$ %։ Պետական բանկի 5% տոմսեր. 1-ին շրջանի—99 ր. սակարկ., 2-րդ—$98^3/_4$ ր. սակ. 3-րդ—$98^3/_4$ ր. գն. 4-րդ —$98^1/_2$ ր. 62 կ. սակ. 5-րդ—$98^1/_2$ ր. գն.։ Արևել. փոխառութեան 100 և 1000 ր. 5% տոմսեր. 1-ին շրջանի—$97^3/_4$ սակ։ 2-րդ—$97^3/_4$ ր. սակարկ., 3-րդ—98 ր. սակ. Վիճակահանութեան տանող 5% տոմսեր. 1-ին շրջանի $217^1/_4$ ր. սակարկ. 2-րդ $211^1/_2$ րուբ. սակ.։ $5^1/_2$% րենտեր—103 ր. սակար.։ Ոսկէ րենտը—$165^1/_2$ ր. սակ.։

23 Փետրվարի.

ՓԱՐԻԶ. Այն լուրը իբրթէ Տուլոնում նորից խոլերայ է լոյս ընկել, մերժվում է։

ՇԱՆԽԱՅ. Կուրբէի զօրս խումբը վերադարձաւ Նինգ-Պօյի գետաբերանը, թողնելով Եանցի—Կիանգի գետաբերանում միքանի մարտանաւեր։

ԼՈՆԴՈՆ. Գրանվիլը լօրդերի պալատում ցաւ յայտնեց, որ Բիսմարկի հետ միքանի տարակուսանքներ են ծագել։ Գրանվիլի մեկնութիւնները գաղթական քաղաքանութեան մասին անկանոն են բացատրուել մասնաւոր հեռագրներում, նա՞ի չար գործ չէ դրել, այլ իւր տեղեկութիւնները հաղորդել էպարլամենտին Բիսմարկի տրած յայտնութիւնների վերայ հիմնուելով, որոնք մասնաւոր բնաւորութիւն չեն կրում Գերմանիայում։ Իզուր են կարծում, որ Անգլիան վերաբերվում է դէպի Գերմանիայի դրութիւնը ոչ բաւականին յարգանքով. Անգլիան ընդհակառակն շատ բաւական է Գերմանիայի ձեռք բերած դրութիւնից և անկեղծ ցանկանում է բարեկամական յարաբերութիւնները պահպանել առհասարակ բոլոր տէրութիւնների հետ և մանաւանդ Գերմանիայի հետ, որի հետ միասին նրանք ունին այնպէս շատ ընդհանուր շահեր, և որը շուտով Անգլիայի հարևան կը դառնայ աշխարհի բոլոր ցամաքահողերում։ Գրանվիլը վերջացրեց իւր ճառը հաւատացնելով, որ կը շարունակի հետևել այն քաղաքականութեան, որը Բիսմարկի հայացքներին համաձայն կը լինի։

ՄԱԳԻԼԵՎ (ՊԱԴՈԼՍԿԻ). Դընեստր գետը սառուցից ազատուեց։

ԻՐԿՈՒՏՍԿ. Այսօր այստեղից ուղևորուեց Եան գետովը դէպի Նոր Սիբիր կղզին երկու անձից բաղկացած գիտնական մասնախումբը, դոկտոր Բունգիս և բարոն Տոլիս։

ՀՈՆԿՈՆԳ. Ասում են, որ Ֆուչէ-Ֆուից դուրս տարած թէյի մաքսը աւելացրած է $3^1/_4$ տաէլով արկղի վերայ։

ԿՈՐՏԻ. Ուոլսլէյն իւր օրուայ հրահանգում շնորհակալութիւն է յայտնում զօրքերին նրա անձնազոհութեան համար և յոյս է յայտնում գնալ Խարտումի վերայ աշնանը։

ՕԼՄԻՒՑ. Շրջակայքում քարէտածուխի հանքերում գազի պայթումն պատահեցաւ, որից 123 հանքային մշակ վնասուեցան. որանցից մեծ մասը խեղդուել կամ այրուել է։

24 Փետրուարի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Արխանգելսկ նահանգի սրբազան Սերապիոնը նշանակվում է Եկատերինոսլաւի և Տագանրոգի եպիսկոպոս, իսկ Պսկովի Նաթանայէլ սրբազանը նշանակվում է Արխանգելսկիև Խոլմօգորսկի եպիսկոպոս։

Ներքին գործոց մինիստրի հրամանքով արգելուած է 8 ամսով մասնաւոր յայտարարութիւնների տպագրութիւնը „Эхо“ լրագրում։

Բարձրագոյն հրամանով թոյլ է տրուած օսլայագործների (կրախմալ շինող) և օսլայավաճառների ժողովը Պետերբուրգում և կը կայանայ մարտի 5-ին։

ՓԱՐԻԶ. Խօլերայի երևալը Մարսելում սուտ է և այն լրագիրները որոնք տարածում են այդ տեսակ լուրերը դատի կ՚ենթարկուին։

Բրիէր-դը-Լիլը ծանուցանում է, որ մարտի 3-ին Տուէնկվան ժամանելուց առաջ հանդիպեցաւ «սև դրօշակ» կոչուած և Իւնանի զօրքերին և նրանց հետ ունեցաւ սաստիկ պատերազմ մինչև Տուէնկվանի առումն, որի միջոցին չինացիները 7 անգամ յարձակուեցան Ֆրանսիական քաղաքապահ զօրքի վերայ, մեծամեծ վնասներ ստանալով։

ԲԵՐԼԻՆ. „Norddeutsche Alg. Zeit.“ լրագիրը ասում է, որ հակառակ միքանի լրագիրներին, որոնք հաղորդում են թէ իբր Բիսմարկը գնացել էր Լօնդոն համաձայնութիւն պատրաստելու Անգլիայի և Ռուսիայի մէջ աւղանական սահմանագծի վերաբերմամբ, կարող է հաւատացնել, որ աւղանական հարցը ոչինչ կապ չունի գրաֆ Բիսմարկի Լօնդօն գնալու հետ և թէ Ռուսիայի և Անգլիայի մէջ գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները այն աստիճան խիստ չեն, որ մի երրորդ պետութիւն իւր ծառայութիւնները առաջարկէր նրանց։

25 Փետրվարի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Վերջնականապէս մշակուած է ծրագիր արտասահմանեան բարակ տեսակի երկաթի վերայ մաքս աւելացնելու համար և կառաջարկուի պետական խորհրդին ի քննութիւն։

«Эхо» լրագիրը յայտնում է որ ժամանակաւորապէս դադարվում է։

ՆԻԿՈԼԱՅԵՎ. Նաւագնացութիւնը բացուած է։

ԹԷՐ ԵՒ ԴԷՄ

„Մի՛ ասացէք թշնամին թէ յաղթեցի նմա կամ նեղէք իմ ցնծացին թէ ես սասանեցայ“։

Սաղ. Դաւթի. գլուխ ժբ.

ՍՂՆԱԽ, 11 փետրվարի։ — Համոզուած լինելով, որ դուք „Թէր և դէմ“ գրութիւններ հրատարակելով և կարծիքների ազատութեան տեղ տալով ձեր լրագրի մէջ նիւթականապէս վնասվում էք—բացի բարոյական վիշտը, որ վիրաւորանքներից պիտի կրէք—այդ պատճառաւ կարելոյն չափ աշխատեցի կարճ պատասխանել այն հերքմանը, որը տեղիս գործակալ Հ. Ստեփ. ա. քահ. Տէր Ստեփաննոսեանը ձեր լրագրի № 18 համարում անհիմն փաստերով աշխատել է իբր արդարացնել իրան ընթերցող հասարակութեան առաջ, որպէս թէ „Ոմն“ ստորագրութեամբ ձեր լրագրի անցեալ № 205-ում նրա մասին գրածներս բոլորովին զրպարտութիւններ են։

Հայր գործակալը ասում է իւր հերքման մէջ թէ՝ ունիմ ինձ արդարացնող (իմ յղուածի դէմ) զանազան գրութիւններ և կոնդակներ.—շատ կարելի է. բայց որ ունի դրա հետ իրեն գործունէութեան մասին իրեն շատ աննպաստ կոնդակներ—այդ էլ սուտ չէ. միայն թող չը թագցնէ դատարանի առաջ, եթէ կը դիմէ նրան ինձ պապանձեցնելու համար։

Ինչ հարկաւորութիւն կայ հայր գործակալին, որ պահանջում է ինձանից այն քահանաների անունները հրապարակ հանելու, որոնք նրանից անբաւական են, մինչդեռ ինքը համոզուած չէ այդ բանում. չէ՞ որ 1883 թուականին երբ սրբազան Աբրահամեանը այստեղ էր, բոլոր տեղւոյս քահանաները միախմբուած իրենց կողմից ուղարկեցին Թիֆլիսի Վանաց մայր եկեղեցւոյ Գ. քահ. Գալ—նին յայտնելու սրբազանին հետևեալը՝ „եթէ ուզում էք որ Հայոց ուսումնարանների և եկեղեցականների մէջ բարեկարգութիւն ընկնի, հրաժարեցրէք Ստեփ. ա. քահանային ուսումնարանի նախագահութիւնից և գործակալական պաշտօնից“. Պատասխանը ստացուեցաւ սրբազանից „թէ՝ թող այդ մասին քաղաքի մի քանի իշխան մարդիկ ևս խօսեն։» Յետոյ տեղւոյս երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը դիմեց միևնոյն մտքով Առաջնորդին, Սրբազանն էլ խոստացաւ. բայց այդ խոստումը մնաց անիրագործելի—երևի դրա մասին ժամանակ կը գտնենք խօսելու։

Մենք մեր գրածների մասին շատ հիմնաւոր փաստեր ունինք, թող հոգևոր իշխանութիւնը բարեհաճի քննութիւն նշանակելու իմ ներկայութեամբ և ես այն ժամանակ պատրաստ եմ բոլոր գրածներս ապացուցանելու կէտ առ կէտ, նաև խոստանում եմ յայտնելու „Ոմն“-ի տակ ծածկուած իմ անունը, միայն այն պայմանով որ թղթակցութեանս մէջ յիշուած իւրաքանչիւր յօդուածի հաստատութիւնը արձանագրուի։

Թող հայր գործակալը սպասէ և յոյս ունենայ, որ այսուհետև բացի լրագրութեան մէջ հրատարակածների, պէտք է երևան հանուին ինձանից և այնպիսի հանգամանքներ, որոնց դրական ապացոյցներով հաստատելու եմ ի ժամ քննութեան։

Վերջացնելով գրութիւնս, բացի այս՝ խնդրում եմ յարգելի խմբագրից հրատարակել և այն յօդուածս, որ ուղարկեցի յունվար ամսին դարձեալ „Ոմն“ ստորագրութեամբ, որի մէջ նկարագրուած է հայր գործակալի և նրա գործակցի գործունէութիւնը, որից ընթերցողը աւելի պարզ կը ծանօթանայ մեր գործակալի անձնաւորութեան հետ։ Մեծայոյս ենք, որ կը հրատարակէք *)։

Ոմն։

---

*) Դուք տեսնում էք, թէ ինչպէս կրճատուած է ձեր այս պատասխանը ուստի մի սպասէք, որ մենք ձեր յիշած յօդուածը հրատարակենք։ Մենք ոչ ձեզ ենք ուզում վիրաւորուած տեսնել, ոչ էլ նրան, որի դէմ դուք գրում էք։ Մենք „Թէր և դէմ“ թղթակցութիւնները հրատարակեցինք միմիայն այն նպատակով, որ եթէ մութը բան կայ պարզուի, անկարգ բան կայ կարգի բերուի, սխալը ուղղուի... բայց երբ տեսնում ենք, որ ոչինչ չէ լինում և մենք մեր նպատակին չենք հասնում, էլ աւելորդ ենք համարում այդ մասին գրած յօդուածների լոյս հանելը։

Խմբ.

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ես սկսեցի թարգմանել ֆրանսիացի յայտնի պրոֆէսօր Բերտրանի «սկզբնական գիտութիւն»-ը (ալգեբրա)։

Որով պատիւ ունիմ յայտնելու այն պարոններին, որոնք թարգմանել են ուզում վերոյիշեալը, թող իզուր տեղը չը ձեռնարկեն, որովհետև մի մասը ես արդէն թարգմանել եմ, իսկ ով որ թարգմանել է, թող բարեհաճէ այդ առթիւ տեղեկութիւն տալ «Նոր-Դար» պատուական լրագրի միջոցաւ, որ ինքս չը շարունակեմ։

Պօղոս Հալաբեանց։

Շուտով կը հրատարակուի
«ՓԱՐՈՍԻ»
(Լևոնիդ Շաքարեանց) վէպը
«ՀԱՅՐՄԱՅՐ» ՎԵՐՆԱԳՐՈՎ.
Բաժանորդագինն է 1 րուբլի։
Հասցէս՝ Леониду Шакарову, Шушу. 2—1

ՇՕԿՕԼԱԴ
Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.
(Ц. 2342.) 48—4

Անդրկովկասեան երկաթուղին։

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍ“ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաթում պոստ. գնում է Ժ. 8—31 րոպ. առ.
Բաթումից „ գալիս է „ 10—25 „ գիշ.
Բաքու ապր. և ճանապ.
գնացքը գնում է . . „ 10—45 „ առ.
Բաքուից „ „ գալիս է „ 2—30 „ ցեր.
Շաբաթը երկու անգամ ապրանքի և ճանապարհորդների գնացքի տեղ ուղևորվում է արագընթաց գնացքը։
Բաքու գնում է երեքշաբթի
և շաբաթ օրերը . . . . „ 10—58 „ երեկ.
Բաքուից գալիս է երեքշաբթի
և ուրբաթ օրերը . . . . „ 7—53 „ առա.

Պոստային կառքերի շարժողութիւնը Կովկասի (Թիֆլիս-Վլադիկովկասեան) ճանապարհով։

Կառքեր, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկավկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. միջ։

Վլադիկավկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ. միջ։

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ։

Նոյեմբերի 1-ից կազմուած ցուցակը շոգենաւերի երթևեկութեան համար մի շաբաթուայ ընթացքում Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի միջ։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ Է

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը, ժամի 4-ին երեկոյեան, ուղիղ գծով Նովօրոսիսկ և Կերչ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, ժամի 8-ին երեկոյեան, շրջանական գծով ամեն նաւահանգիստների վերայ։

ԿԻՐԱԿԻ օրերը, արտասահմանեան գծով դէպի Կ. Պոլիս։

ԳԱԼԻՍ Է ԲԱԹՈՒՄ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ, կէս գիշերին մօտ, Օդեսայից շրջանական գծով.

ՈՒՐԲԱԹ օրերը առաւօտեան, Օդեսայից ուղիղ գծով Կերչի և Նովօրոսիսկ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, առաւօտեան, Կ. Պօլսից։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Փետրուարի 14-ին, կիւրակէ օրը, ժամանեց Բաթում «Անատոլիա» (Anatolie), շոգենաւը ծովապետ Բօշէլ (Boschel), իսկ երեքշաբթի մարտի 5-ին յետ կը դառնայ Տրապիզոն, Սամսուն, Կ.-Պօլիս և Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին, Բաթումում պ. ԳԱՐԱՆՏՕՆԻՆ, Թիֆլիսում պ. ՌԷՆՕԻՆ, գալերէյ Նախիջին Արծրունու № 103.

3—1

Նոր-Նախիջևանի ՀԱՅՈՒՀԵԱՑ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը պատիւ ունի յայտնելու, որ անցեալ 1884-ի համարատուութեան համար նշանակուած է ընդհանուր ժողով մարտի 3-ին, կիւրակի առաւօտը ժամի 11-ին։

Ժողովը տեղի կ'ունենայ թեմական դպրանոցի դահլիճում, ուր և հրաւիրվում են ընկերութեան մեծ. անդամները։

3—3

Дозволено цензурою. Тифлисъ, 25-го Февраля 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի ա. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., № 12.